Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի «Հասմիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի՝ 1,12 դրույքաչափ, նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի՝ 0,5 դրույքաչափ և նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի 0,25 դրույքաչափ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ. N 08-ն հրամանով հաստատված ՆՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների ընտրության կարգի 3-րդ մասի 12-րդ կետով պահանջվող փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

10) Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

11) Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

12) Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2. դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3.տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.

4. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Փաստաթղթերն ընդունվում են **2026 թվականի հունվարի 8-ից մինչև 2026 թվականի փետրվարի 5-ը** ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող՝ 10փողոց 17/1 հասցեում:

Մրցույթը անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի, համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.10.2024թ-ի №1981-Ա/2 հրամանով հաստատված հարցաշարերի /**https://escs.am/am/news/11978**/:

Դաստիարակի մրցույթի թեստային փուլը տեղի կունենա **2026թ-ի փետրվարի 12-ին ժամը 10:00-ին,** իսկ հարցազրույցի փուլը անցկացվում է նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ **11:30-ին:**

Երաժշտության դաստիարակի մրցույթի թեստային փուլը տեղի կունենա 2026թ-ի փետրվարի 12-ին ժամը 12:00-ին, իսկ հարցազրույցի փուլը անցկացվում է նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ **13:30-ին:**

Հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթի թեստային փուլը տեղի կունենա **2026թ-ի փետրվարի 12-ին ժամը 14:00-ին,** իսկ հարցազրույցի փուլը անցկացվում է նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ 15:30-ին, ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող 10 փողոց 17/1 հասցեում:

Էլ.փոստ՝ edvinakhachatryan11@gmail.com